

կ'ըսուի յասակի կու, որ թերեւս բերանակապ կենակէ : Այս բերանակապը հրամայր Հայոց Յավկերս նա եւ խոր թիւեւս ատեն . « Հայոց՝ առանց փանամի մի՛ զանգցին » : — Դարձեալ, ի պատիւ կրակի կու հրամայուի, և Խիրոք և քակորդ ի կրակ և մի՛ եկեցեն » : Այստ մաշած կրակին մասցորդն անզամ՝ Մոփիրն, սրբազնացեալ էր, պէտք էր ժողվել և լեցընել ի Մոփիրանոց, որ եօմն մեծամեծ Ասրուշանաց կամ կրա-

կատանց մէջ⁽¹⁾ էին. և նշութեամբ կու պահանջէին ի պաշտօնէից՝ մնիրին քանակը. այս է Եղիշեայ մէջ յիշուած մնիրալափ կարգն : Նոյն հրամանաց մէջ յիշուի և կապարի կարգ, որ էր որոշեալ շափով մի ժողվել մանր ճճիներ, միջիններ, գորտեր, և այլն, իբր պիղծ (խարժասդար) կենզանիք՝ Անդէնէ ստեղծեալ, և նիշել զանոնց, կամ առ մոփակուն զրկել, որ ապահով ըլլայ՝ թէ կրակի մէջ չեն ձգուած :

Շարայարելի



ԱՐՈՒՍԱԿԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

— ։ ։ ։

(Տես յէջ 197)

Գ. Հաճնշակի մահուանէն տասն տարի մի վերջը՝ ուրիշ Հայ զգուրկ միանգամայն և քաջ զօրակար մի փառօք փայլի յԵղիպտոս, Աբուսակի Զուկրեայ վանաց ստորագրութեան մէջ յիշուածն թառ ատ-տասելա Փէհրամ, ։ ։ ։

Քայց և լուծէ. ծանօթ ազնուական ցեղէ Պահաւառնեաց, ի մօրէ այլ Գրիգ. Մագիստրոսի թոռն, Հօրեղբայր Ա. Ներսիսի Շնորհալույ և եղբայր Գրիգորիսի եպիսկոպոսին Եղիպտոսի Վահրամ. ասոնց հետ եկած էր նաև միւս եղբայրնին, Վասակ, զոր և վասիլ և իսաւաց

կոչեն Արարացի պատմիչք: Շնորհաւ կոչի իր Ախպասանութեան վերը իր ցեղին ազգարանութիւնն ընելով, յիշէ զայս երեք հօրեղբարյան այլ, նախ մեծ Վահյասիրին համար ըսելով, թէ յԵղիպտոս՝

« Անդ ի յաթոռըն ոտորք եղեալ Զառ ի քեռէն որդի ծընեալ ԶԳրիգորիս համանուանեալ... Որ Յավսեփայ մեծին նմանեալ Ըզհամազգիս ըսկնի ձրգեալ, Զարի եղբարս իւր քաֆցեալ, Բատ Յեսովայ զօրավարեալ, Որոյ Վահրամ վերաձայնեալ, Միւսոյն վասակ անուանադրեալ, Ուր վեհագոյն փամս ընկալեալ Եւ մեծարդի պատույ հասեալ Ըզպատերազմ ազանց փանեալ Հակառակաց յաղթող զըսեալ Վասն պատրիկ շըֆեղացեալ, Եւ աշխարհի նոցունց տիրեալ » :

Տիրեն շատ է, բայց ստուգի տեսակ մի տիւրապետել և պայասաւուել էր կէս գար, Պատրի և Հաճնշակի վզըմութիւնն, վասն զի թոյլ տուութեամբ կամ թուլութեամբ խալիքայից, իրենք հոգային թէ քաղաքական թէ զինուուրական գործերը, և թէ անսեսակինը, այսուինց տէրութեան գանձն կամ եկամտան, որ Պատրի վերահոգութեամբ, և Աւ-խահհալ

մեծ Ղատիի գործադրութեամբ՝ տարեկան երեք միլիոն դենարէն աւելի էր, իսկ Հայնացածք, կը լուսէ Արևոսահը, զիհակարկը աւելցուց մինչեւ մէկ թէնար և $\frac{3}{4}$: Առողջ գործոց թէ ոչ շատ տարի՞ այլ շատ մասամբ հետեւող և յաջորդ երան Շնորհաբոյ գոված հօրարեղբարքն, մանաւութեան երիցագոյնն վահարամ թագ պետութեան մասնաւուանանալն, հաւատարիմ ամիրապետին, հաւատարմագոյնն Ամենապետին, հայրենի և պահաւունի ցեղին կրօնապահութեամբ, և տառաւելեալ իսկ քան զիհանակից ազգակիցն, ինչպէս քիչ մի յետոյ պիտի տեսնեմք: — Վահրամ՝ վզուրկ եղաւ Հափը խալիֆայի ատեն, որ թողութեամբ չէր կարող կառավարել. և նաի իր որդին ապստամբեցաւ և սկսաւ զուրինենքն այլ զգբարք. զօրականք աղաչեցին և խալիֆայն Հայնանցաւ որ Վահրամ յանձն առնու վշզիրութիւնը, փոխանակ ապստամբ որդուցն: Վահրամ՝ որ Պատրի հետ Եղիպատոս եկած կ'ըսուի, և անոր օգնական էր և յառաջադէմ ի զինուրական կարգի, զիհաւ անոնց աղաչանաց, և իշխանութեան և բանակին զլուխ կենալզի, երբ մօտեցաւ ի մայրաբարքն, ապստամբն (Աւ-Հաչէն) թողուց փախան, և Վահրամ խաղաղոցու որ բարեկարգեց: Բայց բրու երկու տարի վերը (1137): ՈՒխտավան Վալախիչ անուամբ մէկն նորէն զրգեց զժողովուրդը, իր թէ Վահրամ ամեն պաշտօն և պատիւ Հայոց և քրիստոնէից կու տայ, Հայոց հեծեմապօք և աղեղնաւորք ուղեցին նորէն հալածել զապըստամբները. բայց Վահրամ՝ որ աւելի բարեպաշտ էր քան վառապապաշտ, Հասնօղեց զանոնք որ թողուն բնիկ երկրցց իրենց հազը, և իրենք իրենց աստցուածքն առնուն երթան և Սայխու, ճիմայ Միլիլաւ, ինքն այլ գնաց յայն կողմն, ի թերայիտ, ուր գեռ հին ճագնաւորց հետեւող վանքեր և վանականներ կային և ուր իր եղբայրն Վասակ իշխան էր: ՈՒխտավան յաղողեցաւ յանկարծ վրայ հառնիլ, բռնել ու սպաննել զՎասակ: ուրեց բռնել և զՎահրամ, (և ըստ օմանց բռնեց), բայց իսմանալուր որ նա քառաւած ի վանան նախաւորի կենակ կ'անցնէ, թողուց ազատ, ու եկաւ մայրաբարքին մատցեալ Հայերը հալածեց և Զուրեհայ վանքը արեց: Բայց ինքն այլ բռնուեցաւ և սպանուեցաւ: Խալիֆայն աղաչեց Վահրամայ՝ որ դառնայ իր վշզիրութեան աթոռը. սա յանձն շառաւ, այլ իրբեւ հրւը տաեն մի կեցաւ յարքունիս, և յետոյ ի վանորայս, մինչեւ ի մահն, Արուսան չի պասմեր: այս բաները, միան ի աստրադրութեան հազարաւոր մերմակ վանացածք անձամալ չեմ: իսկ համար մեծ Ա:

Հնուատի կամ Համուտի, որ և Աւանութիուր կ'ըսէ.

« Վահրամ՝ քրիստոնեայ Հայն՝ որ Աւ-Հալիլ խալիֆայի ատեն վզուրկ եղած էր, և յետոյ կրօնաւոր, այս վանաց մէջ միան ձնացաւ, իր պաշտօնէն մերժուելէն ետեւ: Վիզիրը թէպէտ և իիստ շատ տկար և հիւ: և անդ էր, բայց փափագեցաւ երթալ ի Գահիրէ: ուր և տարուեցաւ, և գեռ ողջ համարակին համար հրաման արութեալ կամ կրօպատուած վանքին համար հրաման արութեալ կրօպարաց՝ նորոգելու:

« Աւ-Եսաւ (Վասակ) եղբայր Թաման ատաւուալ Վահրամայ՝ սահմանեց այդ վանաց՝ իրեւ փոխարէն վնասուն, 16 ֆէտզան եր-» կիր»:

Այդ իրբ ուխտատեղի պատուեալ վանքն՝ Եղիպատուի արեւելեան կողմի լերսանց վրայ շինուած է, յանուն հռչակաւոր Ա. Արսէն ճողանաւորի, որ հօն թաղուած էր: — Յիշեալ տարածութեան չափն, մէկ ֆէտզան կամ ֆէտզուն, 4200 քառակուսի Զաք (մերը) է:

Վահրամներէ և Վասակներէ շատ տապէ, և նոյն իսկ Արաբացւոց Եղիպատուի տիրելուն ժամանակակից և գործակից՝ ծանօթ և ուրացեալ Հայազգի վարդանն որ պատմ՝ Բանաց կայսերաց զօրապար ըլլալով Հոռոմ կոսչուի Հայուն Անձոյ, իշէ Արուսակ: Արաբաց զինաւորին (Ամր իսկ ալ-Ասի) բարեկամն էր նա, և Եղիպատուի հարկապետ եղաւ, բայց յետոյ սպանուեցաւ յԱղեքանդրիա: սակայն ի հին Գահիրէ կողուած և հիմայ Ֆաւսդադ քաղաքին երկար ժամանակ լսուր իր անուամբ Շուկայն կամ վաճառատեղին Սիր Վարուսէ, Անձոյ քոյ մօտ ճեմելիքն այլ կոչուէր Կոստ Ֆարվայի զոկակ: Յահ: (Ասա եաք անոնք՝ որ վաճառափողոց նշանակէ, քանի մի հէկ յիրուած է յարձանագիր Հայոց հրռաշակեալ Անի քաղաքի): — Մեր համարգեցաց այսպիսի բարձր գահերով և մեծամեծ պաշտամարք հանդիսանալն յԵղիպատու յիշ: Ժի, Ժի: Ժի դարս, թէ այն երկիրն թէ մեր երկիր պատութեան մէջ նշանաւոր կէտ մէ: որոյ զուգակշեն անշուշտ ընթերցողք՝ մեր դարուս և այս օրերուս նոյն հին աղասարէն մէջ, մերձառարապէն նման պատիւ և պաշտօններ փարած և փարոզ նարար աղզային փաղաներ և պէկեր, Պօդ: Խաւութեան, Արթին Զրաբեան և որդիքն, Խարուպ և Խու-

սութ, Եսուպար, Պետան, Շեքերեան փաշա, և որդին Պօղոս, Տիգրան Ապրոյ ևայլն:

Դ. Այլեւայլ իշխառակը Հայոց Եկեղեցեաց և Վանաց յԵզիպսոս. — Մինչեւ հիմայ մեր փոխադրած պատմական Հայոց յշատակներէն գուրս, Արուանձն ուրիշ երկար կամ նշանաւոր բան մի չի գրեք մերայոց վրայագ, բայց եթէ անոնց ունեցած քանի մի եկեղեցեաց և գանաց, որ են հետեւեալքն, բայտ կարգի կամ շարքի իր գրոց, և ոչ ըստ գրից տեղեաց կամ աշխարհագրութեան:

Եզիպտոսից գերահոչակ բրդանց մօտերը՝ Տահուուր գեղի Գրիգոր Ալ-Քայխի եպիսկոպոսին շնանց Ա. Աստուածածնի եկեղեցւոյն աւրուին ի հակառակութեան Բայիշհանեանց և Ճիշխեանց յիշելի ետեւ, Արուանձն Նեղոսիք արծւմտուն ափէն կ'անցնի յարեւու, կու Հեռանայ մինչեւ մօտ յափունս կարմիր ծովու, և կու ասորագրէ շատ անուանի և ցանկալի տեղ մի, կրօնական և կրօնաւորական նկատմամբ. ամենահոչակ Ա. Անտոնի վանցն և յետին հանգստարանն, որ քաղաքականորէն հիմայ Իթֆիհ կամ Աթֆիհ վիճակին վրաբրերի; Այդ անապատ տեղն ընտրեց կ'ըսէ « Անպա Անտոնայն եզիպտոսից կամ » Անտոնիս, Աստղն անապատի և Հայր միանք ձանց, առաջին անապատակեաց... Այս » վիճակին իթֆիհ եօթին եկեղեցիք կան, » վեցն Ղփտեաց, մէկն Հայոց, որ Կոյշոր » յանուու. Դ. Գէորգայ վիկոյի » ։ Հատ վայելու և գրեթէ անկարեի եր Հայոց, որ քա ամենայն արեւելեայց հետ մէծապէս պատուեն զհասարակաց պատուելի « Նախասկիզբն միանքանց », որում այս բառերով սկսուած արժանավայեց շարական մի երգած են և երգեն ամեն տարի, — որ մոր վերջին ճգնութեան և ճգնակիր մարմույն հանգստարանին մօտ յատուկ վանք և եկեղեցիք մ'այլ ունենային, որ թուի թէ և շէն էր Արուանձնի ժամանակ, զի կամ կ'ըսէ և ոչ կայիք եկեղեցիքն:

Մայուսմ կամ Մափդ Մայուսն ծիգէ գաւառի Զաւիէ վիճակի մէջ գեղ մի է, « ուր կայ եկեղեցիք մի հասարակաց, երեք տէղա», » նովզ. մէտուղինն Ղփտեաց է, և մասն քաջ նահաւակինն թէտորոսի, երկրորդն՝ » Հայոցն է, յանուու փառաւորեալ վկային » Ա. Գէորգայ, երրորդն նուիրեալ Տիրուհ, » ոյ կուսին Մարիամու Մելքիտաց է ».

Ֆայտում. — Հին և անուանի քաղաք է համանուն վիճակի, և այսպէս կոչուի Ֆիում բարի Ղփտեաց, որ յին կամ ծով նշանակէ, քովի անուանի հին Մերիս բնին համար, յարում շատ կոկորդիլուով կային, այն պատճառու Կոկարդիլուոլիս անուաննեցին, նաև

Այսինոյէ: Բաշխարհակամարի 1885 տարւոյ՝ 26000 բնակիչ ունէր: Արուանձն, կ'ըսէ, թէ Փիփդ Մեստրումի որդին, թոռն Քամայ՝ շիներ է այս քաղաքս, և Յովսէփ նահապետ նորոգիր է, և Նւելոսաշամաք մի հաստատեր է: յետ երկար ստորագրութեան, վերջացընէ այսպէս: « Մելքիոր այլ եկեղեցի մի ունին՝ » Հայոց բային մէջ »: գուշակուի ուրեմն որ մերոնք այլ եկեղեցի մի ունէին, զոր չի յիշեր, և թէպէտ այս ֆայումի վիճակին մէջ 25 վանք կային կ'ըսէ, բայց հազիւ երկու կամ երեք եկեղեցի յիշէ, որոց մէկն յանուն Միքայէլ հրեշտակապետի, շատ մեծ և շատ գեղեցկալչն:

Փահուանալիս. — Այս տեղս յայտնի չէ հիմայ, կ'ըսէ թարգմանին Արուանձն Արուանձնի: իսկ սա յիշէ հօս քանի մի եկեղեցի, որոց մէկն յանուն Ա. Արմեհեմոսի, որոց համար Մաքրիզի գրեր է, թէ հնագոյն ճգնաւորաց մէկն է և շատ հոչակաւոր. Ղփտեաց Յայսմաւուրք քանի մի համանուն՝ Հարմանուս, Հարմանուն՝ Առորեր յիշեն. գուցէ հնագոյնն ազգաւ Հայ էր և մեր ազգի արեւմտեան անուամբն ճանչցուած և ոչ անձին բնիք անուամբ: — Մաքրիզի այլ յիշէ Պոս Հարմիեա վանքն Քառ ալ-Խարապ կոչուած մեհենաւեղույ մօտ, ուր շատ հին արձանագրիք կան, յիշեալն այլ անուանի տուրք նգնաւոր մէ:

Ալ-խոստաս. — Թէ և ոչ որոշակի բայց յայտնի է ասոր դիրքն, Սիւյուտ կամ Ասիուտ գտաւուի և մեծ քաղաքին մօտ, որ կին ատեն Սայիդ կ'ըստէր և ի Յունաց Ղփտեպղիս, վերին Ղփտեատուի մայրաքաղաք, և հիմայ 30,000էն աւելի բնակիչ ունի: « Ի խուօս առու, կ'ըսէ Արուանձն, Ղփտեք եկեղեցի ս ունին, Հայք վանք մի քաղքին մէջ և երս կու եկեղեցիք, քաղքին գուրս այլ երկու » եկեղեցից »: Այս յայտնէ թէ Խուօսուի մեծութիւնն և թէ Հայոց բազմութիւնն այն տեղ, բայց պատմիչն չի յիշեր ասոնց եկեղեցեաց անունները, իսկ Ղփտեաց քիչ շատ. և վկայէ որ այս Սիւյուտ գտաւոնին մէջ ասոնք հարիւրաւոր եկեղեցիներ ունեին:

Շինարար. — Կայ մ'է ի Միջին Եզիպտոս, կ'եղոսի արեւմտեան եկեղեցիմ, Զայն կոչուած աւանին այլ արեւմտակողմէր. 2700 բնակիչ ունէր յամին 1885, Ղփտի և Պէտչի: « Ենինարա վիճակին մէջ, կ'ըսէ Ա. բուսակ, Հայոց քրիստոնէից գաղթական » մի հաստատուած էր, որք եօթն եկեղեցի ս ունէին, շատ բարեկարգ, քահանաներով և » միարաններով. եկեղեցեաց մէկն էր, յանուն Տիրուհւոյ անարատ կուսին Մարիամու. մէկն յանուն փառաւորեալ Միքայէլ (հրեշտակապետի), միւս՝ երկու

» եկեղեցիք Ա. Սաքսիմոս (2), երկու եկեղեցի յիշը յանուն Գարբիէլ հրեշտակի, եկեղեցի ո մի աւաստիդար յաձնաւ, կոչուած, եկեղեցի մայլ յանուն փառաւոր վկային Գէ» որգեայ »: Եօթն ըստ, ինն համեմց, հաւանորին յոնուն Հրեշտակապետաց Գարբիէլ և Միքայէլի մէկ մէկ եկեղեցի ըլլալու էր, որով թիւն հաւասարի. իսկ վերլընթերին անունն և իսկն անծանօթ է մեզ: Քարտոսանա. — Բայ Արուսանի այս տեղո Մարգար կամ յոդնակի Մարգարաթ վիճակին մէջ էր, որ հիմակուան ծիրճէ վիճակի պատշաճի, և կար հն եկեղեցի մի Ղփտեաց, եկեղեցի մայլ Հայոց:

Արուսանի յիշած այսպան Հայոց վանաց և եկեղեցեաց զատ, Մաքրիզի յիշէ մերայոց աւերակ վանք մայլ մօտ ի վանորաց Ա. Յովկանու Գրեցուոյ և Ա. Անուրիոսի. որոց տեղին հաւանօրէն անծանօթ չեն դիմուոց:

Նոյն Մաքրիզի յիշէ Ա. Մինաս անսամբ եկեղեցի մայլ Մարյա ճամրոն վրայ, ընդ մէջ լըրմին և հոսպակուտից, (իրեն ժամանակին տեղագրութեամբ). մէկ կ'ըսուիք՝ բայց երեք եկեղեցիք էին իրարու կպած. մէկն Յակոբիաց, միւսն Ասուրոց, երրորդն այլ Հայոց. ամեն տարի տաճախմրութիւնն կ'ըւլար ասոնց մէջ, և կու ժողովէին քրիստոնեալք ի պաշտօն: Մաքրիզի ժի՞ գարուն առաջ կիսուան առեն, կու գրէս:

Արուսանի պատմագրոց մէջ կարելի է քանի մի հարեւանցի նկատողութիւնը կամ աւանդութիւնք այլ գտուին՝ մեր ազգին և մեր պատմութեան մերձաւորք կամ յիշեցուցիչք. ինչպէս տեղ մի զերեզմանոց յիշերով կ'ըսէ, թէ Նեստորականիք և Հայք այլ իրենց եկեղեցեաց մէջ թաղուին. բայց ասի՞ ըսածէն յայտնուի, թէ այդ տեղ յատուկ գերեզմանոց չունին: — Վերայիշեալ Ոկյոտ (Սայխո) մեծ քաղաքին ասորագրութեան ատան, եօթն դուռ ունի կ'ըսէ, որոց մին յարեւելակողմն կոչուի Պայ ալ-Ռիման, Հայոց Դուռն:

Եղիպատոսի բերոց և արդեանց վրայ խօսելով (Թղթ. Ի) զատ յայլոց յիշէ և զըտուած առելզ Եղողամի, կարմիր բողիի, Բալամանքիւզ. Սփիոն, Ապրաւն և Մեղրողի չի Թարգմանին կ'ըսէ թէ Ապրաւնի Սպիոն, յոնարէնէ առնութէ ձբրամէն, Նեղոսի ձուկ մի է ծանօթ, համեղ և կարմիր, և զարանայ, թէ ինչպէս Արուսանի բառական նիւթոց և իւղոց կարգին յիշէ զայն: Ինձ այլ տարակյոս զայ, միթէ չըլլան ի մեր նախնեաց յիշեալ Ապրաւն բարասանն կամ Բալամանի նման իւղն, որ և Ապրաւին զրուած կայ:

Հատ տեղ Եղիպատոսի քաղաքաց և գտաւ-

ուաց սկզբնաւորութիւնը պատմելով, Արուսանի աւանդական ազգարանութեամբ Գամայ որդիք և թոռունք յիշէ, յատուկ և հասարակաց անձանօթ անուամբք, զորա աելի կամ պական՝ գուցէ յիշն և ուրիշ արարացի պատմիչք. նախ քանոնք յիշէ և Նոյ նահապետի շրբորդ որդի մի Ապու Նախուոր անուն Եթայց, իմաստուն և հնարող երկանգընթի, և եղանակաց բաժանման, և այլն, և Ներրովթի ուսուցիչ կ'ըլլայ: Թարգմանիչն ամենեւին անծանօթ համարի այսպիսի անուն և անձն, որ մեր թուի Միքայէլի Ասորուց, Վարդանայ և այլոց յիշած Մահմունն, իբր ճնեալ յետ ջրհեղեղի, հմտու և հնարող յիշեալ գիտութեանց, որոց հարազատ քոյր էր Ասողիկ, ըստ մերոց:

Եղիպատոսի հրաշալեաց մէջ, որ ըստ ոմանց քանի են, մէկ քանին յիշէ և Արուսանի, յորս և Շարդուն սիւնն, այս ալաստրան ալլա ամանամիշն ամարմար քարէ, 17 կանգուն բարձր: Երկու կանգնաչափ տրամագծով, որ տարօք մէջ ոք իւր շարքի: Ուրիշ արարացի պատմիչը յիշն ոմն այս ոմն այն մերիայ, որ թէ մէկն դաշին՝ յալ ու ձափի կողմ կ'երերայ. և մէկն այլ կ'ըսէ, թէ այնքան զգալի չէ շարժումն աշօք տեսնելով սեան վրայ, հազար անոր շորքին վրայ նայելով կ'իմացուի: Այս շարժուն Սիւնն կու յիշեցնէ մեզ Տաթեւու վանաց Գաւազան ըստած շարուն սիւնն, որոց որպէսն և ձեւն այլ նշանակուած է (Է-Արական, երես 234):

Յիշեցնէք որ Արուսանի գիրքն վերջանայ քանի մի քաղաքաց անծանօթ շինուաց յիշեակաւ. անկէ անմիջապէս առաջ, որ է ըսել վերջնթեր տեղեկութիւնն, է սոսկ անկորդ հասուած մի Թամանին տեղուոց վրայագք. և է այս, « Թամանինին կոչուած գիւղն »: Ասոր մօտերն է Քարտա (Կորսուաց) լեռն, ուոր Նոյի տանեն կեցաւ տապանն, Ճիւտի յինանէն զալով. այնքան բարձր է, որ իրեն հաւասար լեռ չկա չկայ երկրի վրայ, և անկէ երկրիս չորս անկիւններն կ'երեւինս: Վկայ Հնգամատեանն (Մովսիսի), թէ Ասուուած, ո որ գովինալ ըլլայ, հով մի փէց երկրիս վրայ, և լուրերն սկսան նուազիլ, և աղոքիւք անկնդոց և պատուանք (խանճք) ո երկնից գագրեցան. և Ըուրբ քաջակեցան յետ 150 օքրերու. և Նոյի նաւն կամ տառ պանն նստեցաւ եօթներորդ ամսոյն 27ին Քրիտաց լեռնաց վրայ, ի գիւղն թամանին կ'կոյուած, համեմատ առաջուց ըստածին »: Արուսան առաջնուց բան ըստ չէ ասօք վըրայգք, գուցէ զըբէն գուրու ընկած ըլլայ: կամ սկզբան պակսուած թղթոց մէջ յիշաւած ըլլար, ուր համարուէր Հայոց վրայագք գրեն:

Գրեթէ համաձայն իրեն՝ շատ գարերով յա-
ռաջ դրած է մեր այլ, Անուսէ խորենացին,
Հոփիսիմեանց ուղեւորութեան պատմութեան
մէջ. « Կազու զնացեալ ընդ մէջ կորդուաց՝
» ընդ շետան Սոուփ (կամ Սաղուփ) ի
» Բերկոցոց գաւառին . . . Վասն այսր է՞»
» րին ասի յԱսուց, թէ ի նուազել չուրցն
» Հեղեղաց եկաց ատպանն ի գոռու էրինն՝
» որ է Սարարադայ. և ընդ մէջ անցեալ
» Սղոցածուկն՝ արգելու զնաւե. և անուն
» քաղաքագիշն կոչեցաց թօրենիս կամ թօր-
» մէնի (կամ թէնին). այսն ինք, թէ յայս
» տեղուն ոգիք ութ ելին ի տապանէն » : Ա-
» ւելցընեմք մեր էին պատմէն (խորենացոց)
խորդածութիւնն այլ « Բայց, այսոքի թէ
» արդարը կամ սուտք ինձ ու է փոյթ. բայց
» միայն զի Հանեցուցից (զրնթերցողիդ) մը-
» տացդ զտարփանս, վասն այնորիկ դրեմ
» քեզ զրնաւն » : Եւ գարձեալ աելցընեմք,
որ ինչուան հիմայ այլ լուսի այն կողմիւում
այդ աւանդութիւնն, ութ և ըստ ոմանց քա-
ռասուն ուղուց ջրեղեղէն ետև հօն քաղքե-
լը. յոյն էին հիմնակիք այլ յիշեն այդ տեղ Սո-
լոփիհա զաւառ, որ և հիմայ այլ կայ Պիրքէ
տեղ կամ գեղ մի համաձայն թերկոցոց,
որ պէտք էր գրուիլ թերկոցոց. օրինակ
մայլ զրէ բագրացոց :

Գուցէ հանոյ ըլլաց մերայոց՝ Արուահէի
ըստ բան մ'այլ Ա. Թովմայ առաքելց վր-
րայ, որ Հայոց այլ քան զայլ շատ առա-
քեալս յատուկ սիրելի և պաշտելի է : և ո-
րոց վրայ քրիստոնէութեան առաջին գարերէն
սկսեալ ինչուան մեր օրերուն՝ շատ սայդ և
անառայ բան դրուած է : Գրեթէ անենքն
միարահին թովմայի ի Հնդկաստան երթա-
ւուն և ասա կուպաստներ՝ ի Քիրանոս հաւ-
ասցնելուն, որ և ինչուան իմայ մեծապէս
պատուի նա, ի Մարապար: Արուահէ կ'ըսէ,
թէ յետ քարոզութեանն և նահասակութեանն
թաղեցին զնա մեծ եկեղեցւոցն մէջ՝ որ իր
կենդանութեան ատեն շինուած էր, յետոյ
իր անուամբ կոչուեցաւ, երբ դրին մարմինը
թանկագին և վայելչակազմ տապանն մէջ,
տեսան որ ան անապական մացեր էր. այլ
աւելի սիրեցին զնա և հաստատեցան ի
հաւասար բայց երբ եկեղեցւոցն դուրս ելան՝
յանկարծ ծովուն ալիքներն խոժեմլվ վլժե-
լով եկան շորս կողմ՝ պաշտեցին, և եկե-
ղեցին անմասների եղաւ. սակայն ամեն տարի
ի տօնի Սրբոյն՝ յետ քաջուելու ծովն, եկեղե-
ցին բացուէր, և ինչուան հեռաւոր կողմերէ
գային բազմութիւնը հաւասացելոց. տապանն
հանդիսապէս դնէին, և մէկ կողմէն ծակէ
մի դուր հանէին թովմայի անապական ա-

լը, և անոր մէջ դնելով զՍուրբ Խորհուրդն,
մի առ մի գուղով հաջորդուէին. և երբ ա-
մենէն ետք եկողն այլ բնուունէր զԱրրու-
թիւնը, աղն ինքն իրեն կ'ամփոփուէր, քա-
հանապէ այլ գարձընէին գոտապանն ի տեղը.
երբ ամենէն ալ գուրս ենթին և հեռանային
ի ծովեղբըն, ծովուն ջուրերն նորէն գային
շրջապատէին զեկեղեցին, մինչեւ ի միւս
տարին :

Հայք կ'ընդունին Ա. Թովմայի նահաստա-
կուիլն ի Հնդկաս, բայց մարմինը ցն թո-
ղուք անոնց, այլ իրենց. վասն զի Առաքե-
լոյն աշկերտներն, կ'ըսեն՝ ըստ Յայսմաւու-
րաց, գոյցան բերին յԱրոբստան. ուսկից
յետ շատ ժամանակի տարուեցաւ Հայոց
Աղնեաց գաւառին Վան կոյուած տեղին, որ
թուի Աւան. անկից այլ յետոյ տարին « ա-
» ամանորդութեամբրուսափայլ ասեեղն, գնա-
» ցեալ հասին ի գաւառն Ռշտունեաց, ի վե-
» րայ գելցն որ կոյի Պարծիս. և անդ դա-
» գարքան եկաց աստղն՝ ի բրածը և ի հայեակ
» տեղուջ, և անդ եղին զնշխար Ա. Աւա-
» քելցն ի քարեայ տապանի. և շնինեալ ե-
» կեղեցին եղին ի դրանդի եկեղեցւոցն. և
» շնինեալ տեղին վանք միաբանակիցաց. և
» է մինչեւ ցայսօր » : Երանի թէ և ի մեր
մինչեւ ցայսօր՝ այնպէս ըլլար, յայսմի և
արքանապէս պատուեալ:

Ցես ամենայն յիշասակաց Արուահէի՝ որ
մէկ կամ միւս կերպով մերազգեաց կրնային
հետափնական ըլլալ, և զոր մենք քաղելով
թարգմանեցինք և ծանօթարաննեցինք որոնի
հետեւ հեղինակին բան նպատակն էր և ե-
րեցաւ՝ Ղփանաց վրայ տեղեկութիւն տալ,
ի մէջ բերենք անոնց մարդաթուոյ համար
զրանի այլ, թէ և իրմէ շորս հինգ դար ա-
պահան վիճակին, այսինքն Արաբացոց սի-
րապետելուն (յամին 640), իրը գար մի եա-
քը. « Եզդիպատուի Նուամման զիրքն կտա-
յած լաւածք, որոյ հեղինակն է Աւ-Քիննորի),
» պատմէ, թէ Աւ-Վայիսի իան Զուվա ե-
» կաւ յեզդիպատու հարկ ժողուելու, Հիշամ
» իան-Արգլէչիքի ամիրապետութեան ատեն,
» (720-43 թու. Քիրատոսի), և ժողովրդեան
» մարդաթուու ընելու, և վեց ամիս կեցաւ
» ի Վերին Եզդիպատու, երեք ամիս ի Սոս-
» րին, 10, 000 զեղէ աւելի համրեց, որոց
» ամենէն փարին մէջ այլ 500 արո Ղփան
» կար, որով բորոր (արո) Ղփանաց թիւն
» էր 5,000, 000» : — Հիմայ այլ ըստ 1877
տարուց եղած ազգահամարի, Եզդիպատուի բոլոր
բնակիչն (բաց ի Նուրիեյ) 5,500, 000 հա-
մարուին. յորս քրիստոնեայ Ղփանիք իրը կէս
միին, իսկ Ֆէլլաք (կամ Ֆէլլահինք) որ
ին պարագան և մահմէտական Ղփան

4,500,000. մատելքնեն Պէտք վիզ 300,000, թուրք 10,000, նոյնքան և Հայք, Հրեաք 20,000, Աթովացիք Նորէիք, Սուսանցիք 43,000, Ասորիք 7000, Յոյնք 20,000, այլ եւայլ օսարականք, երովացիք 90,000. Անցեալ դարուն վերջը Փանակաց քննիչ դիտնականք 2,500,000 համարէին. Հիմայ ոմանք ինչւան 7 միլիոն. Խսկ բնակութեան տեղիքն՝ 40 քաղաք, 3600 գիւղ. ըստ 1847 հաշուի ոմանց՝ 4450 էին գեոզք և քաղաղք.

Հիմայ, բաց ի Արէզի պարանոցին կողմի երկիրներէն (Արէզ, Խոմայիլիէ, Բորդ Այտ) համարուին 60 վիճակք, 113 քաղաքք, 3340 գիւղք. Արէին իմն հաշուով թէ բնակրանաց թէ բնակաց թիւն իբրեւ. Կէն է Արտսահի գրածին և Ը դարու մէջ եղածին: Հաւանօքն մօտաւոր վերջի տարիներ աւելի սույզ մարդահամար եղած պիտի ըլլայ, զոր գեռ չունիմք ի ձեռին:



ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՇԱՏՏՐԻ ՑԱՐԵՒԵԼՈ

(Տես յէջ 206)

ԻԶ

Էրիխաժնի վանաց այցելուրին. — Երեւանու տեսիլն ու կլիմայն. — Արարատայ վերելից կարաւանի հանդերձանք. — Գիշերային մեկնում դեպ ի յլլրալը. — Գոյցասար գիւղ և Ասորիք. — Երասիս գետը կ'անցնինք:

27 յունիս. — Երեւան գտնուելով՝ անհրաժեշտ էր մեզ այցելել անկէ 40 հազարամետր հեռի Էջմիածնի վանաց, որ Հայոց Հռոմը համարուած է: Խնչակն ծանօթ է, Էջմիածնի հաշակեալ և վաղեմի վանցը՝ Գրիգորեան Հայոց պատրիարքին կամ կաթողիկոսին բնակավայրն է, Վաղարշապատ գիտին մէջ, որ պահած է հին քաղաքին անունն, որոյ տեղւոյն վրայ շինուած է, որտ երբեմն անուանի և ի պատուի էին Անահաւայ, հայկական Աստրդկան պաշտամոնք:

Հայաստանի քաղաքաց մէջ նշանաւորներէն մէկն եղած է վաղարշապատ: Հիները Արտիմէ քաղաք կը կոչէին կամ Անահաւայ՝ և հիմնարկութիւնը կը հանեն մինչ յերուանդ Աթագաւոր, որ կ'ապրէր ի վեցերորդ դարու յառաջին քաղաքին, որուն՝ ըստ հայոց տաճարամբեան երեւան Քրիստոս ի աեղոջ: Ի յիշատակ հրաշից՝ կասայց սուրբն Գրիգոր զեկեղեցիս և կոչեց Էջմիածնին, որ այն ուրէն մայր համարուեցաւ Հայաստանի ամենայն եկեղեցեաց, կարգէ դուրս պատիւ. և մեծարանք ընդունելով:

Յանձնարարական մը ունէինց առ ուղղին մեմարանին Էջմիածնի, որ սիրալիր ընդունելութեամբ այլ և այլ եպիսկոպոսաց ներկայացուց զմեր. և նորա մանրամասն ցոյց տուին. մեղ զեկեղեցին և զանձատունը՝ յու-

թանձնարարական մը ունէինց առ ուղղին մեմարանին Էջմիածնի, որ սիրալիր ընդունելութեամբ այլ և այլ եպիսկոպոսաց ներկայացուց զմեր. և նորա մանրամասն ցոյց տուին. մեղ զեկեղեցին և զանձատունը՝ յու-